ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

05.09.24 № ՎՑ/06.3/26559-24
Ձեր N ____________________

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ՓՆՋՈՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 02556691
Հասցե՝ ք. Երևան, Քաջազնունի փ. 11/23
Հեռ. +374 96 62 89 94
Էլ. հասցեն՝ rima.nazaretyan@annarka.am

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Փնջոյան,

Առողջապահության նախարարության և «Աննարկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 28.03.2024թ. կնքվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29-1» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 208,000,000 (երկու հարյուր ութ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, 31.05.2024թ. կողմերի միջև կնքված թիվ 1 համաձայնագրով սահմանվել է, որ ապրանքը՝ տոմոգրաֆիկ սարքը մեկ հատ քանակով պետք է մատակարարվի համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրերի ընթացքում:

14.08.2024թ. Ֆինանսների նախարարությունից ստացվել է թիվ 03/26-1/17361-2024 գրությունը (կցվում է) առ այն, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05.04.2024թ. թիվ Ե/801-24 և 06.08.2024թ. թիվ 1828-2024 գրություններով Ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06.05.2023թ. մինչև 20.06.2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները: Վերոգրյալ տեղեկատվությունը 28.08.2024թ. հրապարակվել է Ֆինանսների նախարարության gnumner.minfin.am կայքի «Օրենսդրություն» բաժնի «Մեթոդական ցուցումներ» ենթաբաժնում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ իրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:

- 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի իրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը իրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում իրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում,

մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Համաձայն Պայմանագրի 8.3 կետի, այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի վերոգրյալ կետերը, Պայմանագրի 8.3 կետը, ինչպես նաև հաշվի առնելով Ֆինանսների նախարարության 14.08.2024թ.թիվ 03/26-1/17361-2024 գրությամբ ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ների փոխկապակցված լինելու հանգամանքը՝ Առողջապահության նախարարությունը ամբողջական միակողմանի լուծում է 28.03.2024թ. կնքված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29-1» ծածկագրով գնման պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները: Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման

բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հայտնում եմ Ձեզ, որ Առողջապահության նախարարությունը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի, Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում, նախաձեռնելու է «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց: Միաժամանակ, հայտնում եմ, որ վերոնշված ժամկետում Ձեր կողմից Կենտրոնական գանձապետական 900008000664 հաշվին պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 32,800,000 (երեսուներկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի և 98,400,000 (իննսունութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով վճարելու, վճարման հանձնարարականների բնօրինակները Առողջապահության նախարարություն ներկայացնելու դեպքում, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության, «Աննարկա» ՍՊԸ-ը չի ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

05.09.2024

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Համիկ Սարգսյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060-80-80-03/1804